Երեւանի մամուլի ակումբի «Էթիկական լրագրություն» մրցանակի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երեւանի մամուլի ակումբի ամենամյա մրցանակը Հայաստանի լավագույն լրագրողների, ԶԼՄ-ների եւ լրագրողական կազմակերպությունների համար սահմանվել է 1998 թվականին:

1.2. Երեւանի մամուլի ակումբը՝ նպատակ ունենալով խրախուսել հայաստանյան լրատվամիջոցներում էթիկական լրագրության հետագա զարգացումը, լրագրողների եւ լրատվամիջոցների կողմից իրենց գործունեության ընթացքում լրագրողական էթիկայի համընդհանուր կանոնների, «Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկական սկզբունքների կանոնագրի» դրույթների հետեւողական պահպանումը, սահմանում է «Էթիկական լրագրություն» ամենամյա մրցանակ:

1.3. «Էթիկական լրագրություն» ամենամյա մրցանակը շնորհվում է նախորդ տարվա հունիսի 1-ից մինչեւ տվյալ տարվա հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանում գործունեության համար:

1.4. Մրցանակը շնորհվում է ինչպես առանձին լրագրողներին՝ տպագիր, առցանց, հեռուստառադիո հրապարակումների (հոդված, ռեպորտաժ, վերլուծություն, մեկնաբանություն, հետաքննություն, փոդքաստ եւ այլն, այսուհետ՝ հրապարակումներ) համար, այնպես էլ լրատվամիջոցներին (խմբագրակազմերին)՝ տարեկան գործունեության համար:

1.5. Ամենամյա մրցանակների թիվը կախված է համապատասխան ռեսուրսների եւ արժանի թեկնածուների առկայությունից:

2. ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

2.1. Մրցանակի հավակնորդ լրատվամիջոցների եւ լրագրողների առաջադրումը սկսվում է տվյալ տարվա մայիսի 1-ից եւ ավարտվում է հունիսի 15-ին:

2.2. Մրցանակի հավակնորդներ կարող են առաջադրել Հայաստանի ԶԼՄ-ների Էթիկայի դիտորդ մարմնի, Երեւանի մամուլի ակումբի վարչության եւ խորհրդի անդամները, Լրատվամիջոցների շահերի պաշտպանության կոալիցիայի անդամ կազմակերպությունների ղեկավարները:

2.3. Հավակնորդներին առաջադրողները պետք է հիմնավորեն իրենց առաջադրումը, ինչպես նաեւ՝

- լրագրողի առաջադրելու դեպքում՝ ներկայացնեն համապատասխան հրապարակումների հղումները կամ լուսապատճենները,

- լրատվամիջոցի առաջադրելու դեպքում՝ ներկայացնեն տվյալ լրատվամիջոցի տարեկան գործունեության համառոտ վերլուծությունը՝ էթիկական տեսակետից:

3. ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3.1. Մրցանակի առաջադրված լրագրողների հրապարակումները պետք է համապատասխանեն հետեւյալ չափանիշներին.

- Համապատասխանեն «Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկական սկզբունքների կանոնագրով» սահմանված դրույթներին:
- Պահպանված լինեն օբյեկտիվության, անկողմնակալության, հավաստիության սկզբունքները: Այսինքն՝ փաստերը պետք է ներկայացված լինեն չեզոք, առանց զգացմունքային երանգավորումների, դրանք պետք է հղումներ ունենան աղբյուրներին:
- Չճշտված փաստերը պետք է նշված լինեն որպես այդպիսին:
- Վերլուծությունները, մեկնաբանություններն ու եզրահանգումները պետք է հիմնված լինեն բերված փաստերի վրա:
- Վիճահարույց խնդիրների վերաբերյալ պետք է ներկայացված լինի տարբեր՝ առնվազն երկու տեսակետ:
- Բացառված պետք է լինի թաքնված գովազդը:

3.2. Մրցանակի առաջադրված լրատվամիջոցները պետք է համապատասխանեն հետեւյալ չափանիշներին.

- վերջին հինգ տարում ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին տվյալ լրատվամիջոցի դեմ բողոքի բացակայություն,
- առաջադրմանը նախորդող տարում նրանց գործունեության մեջ բազմակարծության, անկողմնակալության, անաչառության, փաստերի եւ կարծիքների տարանջատման, ֆինանսավորման թափանցիկության, խմբագրական անկախության պահպանում:

4. ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

4.1. Մրցանակակիրներին որոշում է Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝ իր հատուկ նիստում, որին պետք է ներկա լինի անդամների առնվազն երեք/քառորդից ավելին (առնվազն 11 անդամ):

4.2. Նիստում որոշումներն ընդունվում են անհատական քվեարկությամբ՝ ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.3. Դիտորդ մարմնի որոշումները հաստատում է Երեւանի մամուլի ակումբի վարչությունը:

4.4. ԴՄ կողմից ընտրված՝մրցանակի որեւէ թեկնածուի վերաբերյալ ԵՄԱ վարչության անդամներից առնվազն երեք հոգու կասկածի դեպքում ԵՄԱ վարչությունը կարող է

նորից դիտարկել հիմնավորումները եւ հաստատել կամ մերժել մրցանակի տվյալ թեկնածությունը։

4.5. Մրցանակի գումարային արժեքը՝ 40.000-50.000 ՀՀ դրամ (կախված ֆինանսական հնարավորություններից), սահմանվել է որպես խորհրդանշական, բայց միաժամանակ արժեւորող խրախուսում՝ ընդգծելու համար, որ մրցանակի գլխավոր նպատակը մասնագիտական հեղինակության, հանրային ճանաչման եւ, գերազանցապես, լրագրողական էթիկայի սկզբունքներին հավատարիմ աշխատանքի գնահատումն է, այլ ոչ այնքան՝ նյութական պարգեւատրումը։

4.6. Մրցանակաբաշխությունը տեղի է ունենում ԵՄԱ հիմնադրման օրը՝ հուլիսի 18-ին։

0002 Երեւան, Ղազար Փարպեցի 9բ, հեռ՝ (374 10) 53 00 67
9b Ghazar Parpetsi str., Yerevan, 0002, Armenia, Tel.: (374 10) 53 00 67
E-mail: pressclub@ypc.am
Web Site: www.ypc.am